ՊԱՏՄԱԿԱՆ ՋԱՎԱԽՔԻ ՇՏԵԱ ԳՅՈՒՂԸ՝ ՈՐՊԵՍ ՀՆԱԳՈՒՅՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Երանոսյան Ա. (ԵՊՀ, Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի գիտաշխատող, Հայաստան)
agyeranos@gmail.com

Բանալի բառեր՝ պատմական Ջավախք, հուշարձան, Շտեա, կիկլոպյան բերդ, մշակութային ժառանգություն:

Շտեան հանդիսանում էր պատմական Ջավախքի հնաբնակ և նշանավոր գյուղերից մեկը: Դրա մասին է վկայում այն փաստը, որ գյուղը հիշատակվում է տակավին II դարի նշանավոր հույն փիլիսոփա, աստղագետ և աշխարհագրագետ Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրության» 5-րդ գրքում, ուր տրված են Մեծ Հայքի, Կողքիսի, Իբերիայի և Աղվանքի քարտեզների մանրամասն նկարագրությունները: Ասիայի 3-րդ քարտեզում հիշատակում է Ջավախքի 3 նշանավոր և խոշոր բնակավայրերի անունները՝ Վարազա (Վարձիա), Սունդա (Ծունդա-Սուլդա) և Sioda: Հայ նշանավոր պատմաբան և քարտեզագիր ակադեմիկոս Ս. Երեմյանը, նոր տվյալների հիմամբ վերակազմելով Պտղոմեոսի վերոհիշյալ քարտեզը, Sioda-ն նույն ացնում է Շտեայի հետ: Գյուղից ոչ հեռու՝ Բադան կոչվող սարի գագաթին, մինչ օրս պահպանվել են կիկլոպյան բերդի ավերակներ: Վերջինիս կարևորության մասին է խոսում այն հանգամանքը, որ բերդի կենտրոնից մինչև Փարվանա գետի ափը փորված էր քարապատ ստորգետնյա անցուղի: Անհերքելի է, որ ամրոցն ունեցել է կարևոր ռազմավարական նշանակություն, քանի որ այն գտնվել է առևտրական բանուկ խաչմերուկում և ապահովել է դեպի Ախալքալաք և Ծալկա գնացող ուղին:

Ջավախքի բնակավայրերի մասին կարևոր հիշատակումների հանդիպում ենք Պևտինգերյան քարտեզում, որն արտացոլում է IV դարի II կեսի վիճակը: Հ. Մանանդյանը, ուսումնասիրելով Հայկական լեռնաշխարհի ճանապարհները, հանգել է այն եզրակացության, որ դրանցից մեկը կապում էր Արտաշատը Սեբաստապոլի (այժմ՝ Սուխումի) հետ, և անցնում էր Ջավախքի Փոկա (Pagas), Աբուլ (Apulum) և Խոսպիա (Caspiae) գյուղերով: Նա գտնում է, որ ճանապարհին այստեղից AdMetcurium բնակավայրի մոտ, անցնելով Կուրգետի (վրացերեն-Մտկվարի)՝ այժմյան Ախալցխա-Ադիգեն-Ջեգարի լեռնանցք երթուղով, դուրս է եկել Սև ծովի ափերը: Հավանաբար Փոկայից ձգվող և Գանձայի վրայով դեպի Հեշտիա (իսկ այնտեղից՝ Աբուլ) գնացող կարևոր տարանցիկ առևտրական ճանապարհի պահպանության նպատակով է կառուցվել նաև գյուղից 14 կմ հյուսիս-արևելք գտնվող և առայսօր պահպանված «Քյոռօղլի» կոչվող բերդը:

Շտեայի նշանավոր և խոշոր բնակավայր լինելու մասին են վկայում նաև գյուղի կենտրոնական հատվածում ներկայումս էլ պահպանված «ժամի տակ» և «Պալի տակ» կոչվող աղբյուրների վերին հատվածում բերդի պարիսպները, նրա տարածքում գտնվող հունադավան եկեղեցու մնացորդները, մի քանի տասնյակի հասնող տապանաքարերը, հայերեն և վրացերեն արձանագրությունները, գետնափոր բնակարանները, ստորգետնյա անցուղիները և հնագիտական տարբեր գտածոները:

THE VILLAGE OF SHTEA(H) OF HISTORICAL JAVAKHK AS AN ANCIENT SETTLEMENT

Yeranosyan A. (Yerevan State University, Memorial Complex of Sardarapat, National Museum of Armenian Ethnography and History of Liberal Struggle, Armenia)